«Ալտերէգո» հանգստի և զվարճանքի գոտի «Արաբկիր» զբոսայգում



*Ծրագրի նկարագիրը*

«Ալտերէգո» («Այլ ես») ծրագրի նպատակն էստեղծել նորարարական հանգստի գոտի «Արաբկիր» զբոսայգու տարածքում, նպաստելառողջ ապրելակերպի մշակույթի զարգացմանը՝ հայաստանաբնակ ու արտերկրից ժամանած այցելուների համար ապահովելովլիարժեք հանգստի կազմակերպման հնարավորություն:Ծրագրով նախատեսվում է ներդնել արկածային տուրիզմի առաջատար ուղղություններից մեկը՝ Զիփ-Լայնը, որը կառաջարկի թռիչքի նոր ձև՝ հնարավորություն տալով թռչելու եղանակային բոլոր պայմաններում: Հանգստի գոտում նախատեսվում է նաև լեռնային հեծանիվ, ժայռամագլցում, նորագույն սարքավորումներով հագեցած մարզահրապարակ, մանկական խաղահրապարակ, ճոճանակներ: «Արաբկիր» զբոսայգում կգործի բացօթյա կինոթատրոն, գրադարան, կլինեն յոգայի, նկարչության և կավագործության ժամեր, աստղադիտակ:
















| | |
|---|---|
| ***Տեխնիկական ցուցանիշներ*** | Նախագծային մակերեսը՝ 28200 քմ.: |
| ***Ծրագրի ժամկետներ*** | Առաջին փուլի իրականացման ժամկետը 2-3 ամիս է: |
| ***Ծրագրի արժեքը*** | Ծրագրիառաջին փուլի արժեքը կազմում է շուրջ 25 մլնՀՀ դրամ: |
| ***Ներդրումների ձևը և հիմնական պայմանները*** | Ծրագիրն իրականացվելու է մասնավոր ներդրումների ներգրավմամբ: Ներդրումներն իրականացվելու են «Գրին Սմայլ» ընկերություն կողմից: |
| ***Ներկա իրավիճակ*** | Ընթացքի մեջ են նախագծի կազմման աշխատանքները: |